

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Հայաստանի սովետական գրողների միության ընդհանուր ժողովը քննություն անցրելով պարտիայի 19-րդ համագումարի արդյունքները և սովետահայ գրականության խնդիրները: Զեկուցումով հանդես եկավ Հայաստանի սովետական գրողների միության պատասխանատու քարտուղար ընկ. Գ. Բորյանը: Զեկուցողը խոսեց այն վիթխարի նշանակության մասին, որ ունեն մեր երկրի տնտեսության և կուլտուրայի հետագա զարգացման, կոմունիստական հասարակության կառուցման գործում, համագումարի նախօրյակին լույս տեսած ընկեր Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոլեմները ՍՍՌՄ-ում» հանձարեղ աշխատությունը, համագումարում արտասանած նրա ճառը և համագումարի որոշումները:

Զեկուցողը նեց սովետահայ գրականության մի բանի հաջողությունները վերջին մեկ—երկու տարվա ընթացքում: Սովետահայ գրականության համար նշանակալից երևույթ հանդիսացավ հայ գրողների լավագույն գործերի լայն մասշտաբներով հրատարակումը առաջին: Վերջին երկու տարում Մոսկվայի տարբեր հրատարակչությունների և Հայպետհրատի ուժերով ռուսերեն են հրատարակվել շուրջ 70 անույ գիրք:

Սովետահայ գրականությունը, սակայն, դեռևս հեռու է պարտիայի և սովետական ժողովրդի կողմից գրականությանը ներկայացվող պահանջների մակարդակից: Գեռևս շարունակում են հրապարակ գալ գաղափարական-գեղարվեստական ցածր մակարդակի, միջակ, անգույն, երբեմն էլ պարզապես խալտուրային ստեղծագործություններ, որոնցում ներկայացվող կյանքը դժգույն է, տաղտկալի և պատկերացում է չի տալիս սովետական ժողովրդի բազմակողմանի, եռուն կյանքի մասին: Գրողների միության ստեղծագործական սեկցիաները և հանձնաժողովները դեռևս լրջորեն չեն վերակառուցել իրենց աշխատանքը: Ստեղծագործական սեկցիաների և հրատարակչական մարմինների անբնադատ վերաբերմունքի պատճառով վերջին տարում լույս ընծայվեցին գաղափարական-գեղարվեստական ցածր մակարդակի այնպիսի երկեր, ինչպես Գ. Պետրոսյանի «Թիկունքում», Ա. Ավագյանի «Վաղը», Բ. Վերդյանի «Քեզ համար, կենինգրադ», Վ. Անանյանի «Ճերմայի մարդիկ» վեպերի, ինչպես նաև մի շարք այլ գրողների թույլ պատմվածքներ ու բանաստեղծական գործեր:

Սովետահայ գրականության լուրջ թերությունների պատճառներին մեկը մինչև այժմ էլ մնում է գրական քննադատության խիստ անբավարար մակարդակը: Սովետահայ գրականագետները, որոնց թիվը քիչ է, դեռևս անհրաժեշտ եզրակացություններ չեն անում իրենց աշխատանքի վերաբերյալ եղած քննադատությունից: Նրանց մի զգալի մասը մինչև հիմա էլ շարունակում է անտարբեր նայել սովետահայ գրականության զարգացման հարցերին, և մատը մատին չի խփում գրականության հրատապ, ակտուալ խնդիրները մշակելու, գրողների ստեղծագործական աշխատանքին օժանդակելու ուղղությամբ: Բազմաթիվ գրականագետներ վերջին մեկ տարում ոչ մի անգամ հանդես չեն եկել մամուլում կամ

առանձին աշխատություններով ներկայացնելով սովետահայ գրականության այս կամ այն պրոբլեմին, գրական որևէ երկի վերլուծությանը: Լուրջ թերություններ կան նաև մի քանի գրականագետների հայ գրականության պատմությանը նվիրված որոշ աշխատություններում և հոդվածներում: Այդ գործերում նրանք սուրբ են տալիս այսպես կոչված միասնական հոսանքի տեսությանը, սխալ են գնահատում անցյալի մի շարք գրողների գրական ժառանգությունը, հստակորեն շքույթագրելով նրանց ստեղծագործության գաղափարական, սոցիալական-դասակարգային էությունը:

Մտքերի փոխանակության կարգով արտահայտվող ընկերներից մի բանից (Ստ. Զորյան, Գ. Տեր-Գրիգորյան, Ս. Սողոմոնյան, Ա. Շահինյան) անդրադարձան սովետահայ գրականության և կինոարվեստի զարգացման գործում եղած թերություններին, դրենելով գրողների գրական վարպետության բարձրացման, նրանց ստեղծագործությունների թեմատիկայի բազմազանության, գրողների շրջանում քննադատության և ինքնաքննադատության ծավալման հարցերը: Ընդհանուր առմամբ Գրողների միության ժողովը չգտնվեց քննարկվող խնդրի բարձրության մակարդակին: Պարտիայի 19-րդ համագումարի կողմից գրականության և արվեստի աշխատողների առջև դրված կարևորագույն խնդիրները, որոնք պահանջում են գաղափարական, տեսական մի շարք հարցերի խոր վերլուծություն, շարժան բոլոր արտահայտվողների ելույթների հիմնական առանցքը:

Հայ գրողները դեռևս չեն կարողացել ստեղծել կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի բազմակողմանի, հարուստ, հերոսական կյանքն արտացոլող լիարժեք գեղարվեստական երկեր, նրանց առջև այսօր էլ նույն սրությամբ կանգնած է գրական վարպետության բարձրացման հարցը: Սովետահայ գրականության մեջ խիստ ետ է մնում երգիծանքի ժանրը, գրական մամուլը դեռևս անբավարար է գաղափարականության տեսական հարցերով:

Ժողովում քննադատության ենթարկվեցին գրականագետներ Ռ. Հովհաննիսյանը, Գ. Հովնանը, Ա. Ոսկերչյանը և ուրիշներ, որոնք իրենց աշխատություններում սուրբ են սովել բուրժուա-նացիոնալիստական այսպես կոչված միասնական հոսանքի տեսությանը: Այդ գրականագետները իրենց ելույթներում փոխանակ ազնվորեն ընդունելու իրենց սխալները, ամեն կերպ փորձեցին մեղմել և սքողել դրանք:

Ընդունված բանաձևում Հայաստանի սովետական գրողների միության ընդհանուր ժողովը միության անդամների ուղղությունը հրավիրեց պարտիայի 19-րդ համագումարի կողմից գրականության ֆրոնտի աշխատողների առջև դրված կարևորագույն խնդիրների վրա և պահանջեց քննադատության ու ինքնաքննադատության լայն ծավալման, ստեղծագործական սեկցիաների աշխատանքի բարելավման, դիսկուսիաների ծավալման և այլ միջոցներով հասնել սովետահայ գրականության նոր զարգացմանը, լավագույն գրական երկերի ստեղծմանը: